# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք.Երևան 21.02.2019թ.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ**

**ՔՆՆՈՂ ԱՆՁԻ**

**թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/19**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ԱՐԱԲԿԻՐ-ԿԱՄԱՐ» ՓԲԸ-ի կողմից 08.02.2019թ. «ԴԻՆՄԱՌ» ՍՊԸ-ի 21.01.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/09 բողոքի համանման բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ԱՐԱԲԿԻՐ-ԿԱՄԱՐ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ԱՐԱԲԿԻՐ-ԿԱՄԱՐ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 08.02.2019թ. ներկայացրել է համանման բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի նախապատմությունը և փաստերը.

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 11.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել

նաև «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն), ինչի արդյունքում Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի հայտը ներկայացվելուն տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը 28.710.800 ՀՀ դրամ է՝ պակաս է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից՝ 34.957.500 ՀՀ դրամ, որը հրավերի պահանջներին չի բավարարում:

Գնահատող հանձնաժողովը, 18.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի պահանջներով, նիստը կասեցրել է և առաջարկել «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովը 23.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ 21.01.2019թ.-ին ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ին ուղարկվել է անհամապատասխանությունը շտկելու ծանուցում, որը «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից չի շտկվել:

Նույն 1.2 կետի 2-րդ պարբերությամբ, գնահատող հանձնաժողովը՝ առաջնորդվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով, «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Գնահատող հանձնաժողովը «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի 9-րդ չափաբաժինը հայտարարել է չկայացած:

ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 1 բաժնի գրության համաձայն՝ 2017թ. «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի ակտիվների հանրագումարը կազմում է 35,010,800 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 34,957,500 ՀՀ դրամ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 63-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Այսպիսով, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության համաձայն՝ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը 28.710.800 ՀՀ դրամ է, որը պակաս է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից՝ 34.957.500 ՀՀ դրամ, ինչի արդյունքում «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց անբավարար և մերժվեց:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ 30.01.2018թ. «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից լիազորված փաստաբան Հ. Տեր-Վարդանյանը հարցում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ «Հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 1 բաժնին»՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն՝ իր վստահորդ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 00039965) 2017թ. ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ,

այսինքն հայտնել, թե «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ 00039965) 2017թ. ակտիվները և պարտավորությունները որքան են կազմել:

Ի պատասխան վերոնշված փաստաբանական հարցման՝ ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 1 բաժնից ստացվել է պատասխան, որ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի ակտիվների հանրագումարը կազմում է 35,010,800 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 34,957,500 ՀՀ դրամ:

Վերոգրյալից երևում է, որ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի մոտ հայտը ներկայացնելու (11.12.2018թ.) տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը պակաս չէ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից, այսինքն այս մասով Ընկերությունը ունի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, որպեսզի ճանաչվի պետության կողմից ֆինանսապես վստահելի գործընկեր և կատարի հայտով ստանձնած պարտավորությունները: Ի վերջո, ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ: Իսկ ինչպես արդեն նշվել է, ՊԵԿ-ի գրությունից ակնհայտ է դառնում, որ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ն ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ, այսինքն, Ընկերությունը լիովին համապատասխանում է Կարգի 63-րդ կետի «բ» ենթակետի պահանջներին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է.

1. Պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու 23.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2.Պարտավորեցնել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի 9-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

**2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն պատշաճ կերպով ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

**3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԱՐԱԲԿԻՐ-ԿԱՄԱՐ» ՓԲԸ-ի կողմից 08.02.2019թ. ներկայացրած համանման բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 08.01.2019թ. նիստի թիվ 3, 10.01.2019թ. նիստի թիվ 4, 18.01.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ),

որին, ի թիվս այլ մասնակիցների, 11.12.2018թ. հայտ է ներկայացրել «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ն՝ Մրցույթի 9-րդ չափաբաժնի մասով:

Մրցույթի հրավերի 1-ին մասի 2.5 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը.

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է նույն հրավերով սահմանված պայմաններով:

գ. եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ մասնակիցը անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ է, ապա նույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պայմանը չի գործում և տվյալ մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն:

դ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.

Ընկերությունը մրցույթին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի՝

- 08.01.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ Մրցույթի 9-րդ չափաբաժնի մասով «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 127,500,000 ՀՀ դրամ:

- 10.01.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Մրցույթի 9-րդ չափաբաժնի մասով «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Նույն արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը որոշել է գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ:

Այնուհետև, Հանձնաժողովը 18.01.2019թ. թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 28,710,800 ՀՀ դրամ, պակաս է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից՝ 34,957,500 ՀՀ դրամ, ինչը Հրավերի պահանջներին չի բավարարում:

Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով՝ նիստը կասեցրել է և առաջարկել է «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

23.01.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետով հանձնաժողովն արձանագրել է, որ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից անհամապատասխանությունը չի շտկվել և որոշել է վերջինիս հայտը գնահատել անբավարար և մերժել:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչն ընդունեց, որ գնահատող հանձնաժողովը 21.01.2019թ. ոչ ավտոմատ ծանուցման միջոցով «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ին ուղարկել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու ծանուցում, որը «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից չի շտկվել: Միաժամանակ, Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ 30.01.2018թ. «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից լիազորված փաստաբանը հարցում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 1 բաժնին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն՝ իր վստահորդ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի 2017թ. ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ: Վերոհիշյալ

հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնից ստացվել է գրություն առ այն, որ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի ակտիվների հանրագումարը կազմում է 35,010,800 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 34,957,500 ՀՀ դրամ: Վերոգրյալից հետևում է, որ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը պակաս չէ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից:

Վերը նշվածի տրամաբանությունից ելնելով՝ Բողոքաբերը տեսակետ հայտնեց, որ տվյալ դեպքում Ընկերության հայտը համապատասխանում է Հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 43-րդ 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

-44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

-47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված

փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

-48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

- 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

2) եթե մասնակիցը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ կամ գնման առարկայի նախահաշվային գինը տվյալ գնման ընթացակարգի շրջանակում չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում անշարժ գույքի ձեռքբերումը կամ մասնակիցն անհատ ձեռնարկատեր

չհանդիսացող ֆիզիկական անձ է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է սույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության մասին.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

պայմաններն ու պահանջները:

Հրավերի՝

- 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

- 7.15 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով

ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է:

-7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

-7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

«Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից լիազորված փաստաբանը հարցում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության սպասարկման թիվ 1 բաժնին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն՝ «Արաբկիր-Կամար» ՓԲԸ-ի 2017թ. ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ: Վերոհիշյալ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնից ստացվել է 30.01.2019թ. թիվ 2050 գրությունը՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՀ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 1 բաժնում հաշվառված «Արաբկիր Կամար» ՓԲ ընկերության կողմից 16.04.2018թ. հարկային մարմին է ներկայացվել 2017թ. շահութահարկի հաշվարկ, համաձայն որի ընկերության ակտիվների և պարտավորությունների հանրագումարը կազմում է 0 դրամ: Այնուհետև ընկերության կողմից 04.09.2018թ. ներկայացվել է 2017թ. շահութահարկի ճշգրտված հաշվարկ, որի արդյունքում 2017թ. ակտիվների հանրագումարը դարձել է 28,710,800 ՀՀ դրամ, իսկ պարտավորություններինը՝ 34,957,500 ՀՀ դրամ: 21.01.2019թ. հարկ վճարողի կողմից կրկին վերը նշված հաշվարկը ճշգրտելուց հետո,

ընկերության ակտիվների հանրագումարը դարձել է 35,010,800 ՀՀ դրամ, իսկ պարտավորություններինը՝ մնացել է անփոփոխ՝ 34,957,500 դրամ»:

«Արաբկիր Կամար» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրել է 30.01.2019թ. թվագրված՝ ռեզիդենտի շահութահարկի ճշգրտված հաշվարկը, ըստ որի՝ Ընկերության ընդհանուր ակտիվները կազմում են 35,010,800 ՀՀ դրամ, իսկ ընդհանուր պարտավորությունները՝ 34,957,500 ՀՀ դրամ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Մրցույթի 9-րդ չափաբաժնի մասով «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ն ճանաչվել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

- ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրած եզրակացության համաձայն՝ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է 28,710,800 ՀՀ դրամ, ինչը պակաս է պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքից՝ 34,957,500 ՀՀ դրամ:

- Հանձնաժողովն առաջարկել է «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

- 23.01.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության 1.2 կետով հանձնաժողովն արձանագրել է, որ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չի շտկվել, և որոշել է վերջինիս հայտը գնահատել անբավարար և մերժել:

- Ընկերության կողմից 04.09.2018թ. ներկայացվել է 2017թ. շահութահարկի ճշգրտված հաշվարկ, որի արդյունքում 2017թ. ակտիվների հանրագումարը դարձել է 28,710,800 ՀՀ դրամ, իսկ պարտավորություններինը՝ 34,957,500 ՀՀ դրամ:

-21.01.2019թ. Ընկերության կողմից կրկին շահութահարկի հաշվարկը ճշգրտելուց հետո, Ընկերության ակտիվների հանրագումարը կազմել է 35,010,800 ՀՀ դրամ, իսկ պարտավորություններինը՝ 34,957,500 դրամ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի կողմից կարող էր շտկվեր միայն Հրավերով սահմանված ժամկետում՝ ինչպես վերջինիս կողմից Կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ Կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ, ինչը Ընկերության կողմից չի իրականացվել:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ թեև 21.01.2019թ. Ընկերության կողմից շահութահարկի հաշվարկի ճշգրտման արդյունքում Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է պարտավորությունների հաշվեկշռային արժեքը, այդուհանդերձ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ պարագայում այն չի կարող հիմք հանդիսանալ «Արաբկիր Կամար» ՓԲԸ-ի հայտը Մրցույթի հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով բավարար գնահատելու համար, քանի որ նշված տեղեկատվությունը Հանձնաժողովին պետք է ներկայացվեր արձանագրված անհամապատասխանությունը շտկելու նպատակով տրված ժամկետում, ինչն էլ ըստ էության չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքներ քննող անձը

## Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱՐԱԲԿԻՐ-ԿԱՄԱՐ» ՓԲԸ-ի կողմից 08.02.2019թ. ներկայացրած համանման բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝**

**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**